



ՌԱՖԱՅԵԼ ՊԱՊԱՅԱՆ

Կյանքի 68-րդ տարում վախճանվեց ՆՆ սահմանադրական դատարանի գործող անդամ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ Ռաֆայել Արամաշոբի Պապայանը:

Ծնվել է 1942 թ. դեկտեմբերի 22-ին, դրամատուրգի ընտանիքում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երեւանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց եւ օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտ: Որոշ ժամանակ, որպես ուսուցիչ, աշխատել է Աշտարակի շրջանի Ուջան գյուղում, ապա որպես լաբորանտ աշխատանքի է անցել նախ իր ավարտած ինստիտուտի ռուս գրականության ամբիոնում, ապա՝ Երեւանի պետական համալսարանի հայագիտական լաբորատորիայի գրական կապերի կաբինետում:

1969թ-ին Պապայանն ընդունվել է Տարտուի (Դորպատի) համալսարանի ասպիրանտուրա, նույն համալսարանում պաշտպանել թեկնածուական թեզ՝ նվիրված հայկական եւ ռուսական փառագլուխության համեմատական վերլուծությանը:

1972թ-ին Ռ. Պապայանը վերադառնում է Երեւան, որպես դասախոս աշխատանքի անցնում Երեւանի պետական համալսարանում: 1980 թվականից դոցենտ էր:

Բուռն ու դժվարին են եղել Պապայանի երիտասարդական տարիները: «Մարդու իրավունքը աստվածային արժեք է» սկզբունքը նրա համար կենսակերպ էր, արմատներ

ձգած փեսակետ ու հայացք, եւ, պարահական չէ, որ այդ փարիներին նրա մեջ ձեւավորվեց իր երկիրը սիրողի, իր երկրի ճշմարիտ քաղաքացու, հեւրագայում՝ նաեւ ազատ երկրի փեսականն իրական ունենալու համար անլեզալ պայքարողի կերպարը:

Այդ փարիներին ՊԱԿ-ի պահանջով նրան գրկել են դասավանդելու իրավունքից, 1982-ին ձերբակալվել է եւ «հակասովետական ագիտացիա եւ պրոպագանդա» մեղադրանքով դատապարտվել 4 փարի ազատագրկման՝ հեւրագա 2 փարվա աքսորով:

Նայրենիք վերադառնալուն պես շարունակել է իրավապաշտպան գործունեությունը: Եղել է Ղարաբաղյան շարժման ակտիվ մասնակից, աշխատելով արտերկրի լրատվական միջոցների հետ՝ սրանձնել է միջազգային հանրությանը՝ Նայաստանում ծավալված իրադարձությունների մասին հավասարի փեղեկություններ հասցնելու պարպականությունը:

1989թ-ին՝ 2 փարվա գործագրկությունից հետո, հրավիրվել է Երեւանի պետական կոնսերվատորիա, որտեղ հիմնել է հայագիտական ամբիոն եւ ղեկավարել դրա աշխատանքը: Նույն թվականին հիմնադրել է Մարդու իրավունքների հայկական լիգան եւ եղել է դրա նախագահը:

1990թ. մարտին մասնակցել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Ժնեւյան ամենամյա նստաշրջանի աշխատանքներին՝ ոչ կառավարական կազմակերպությունների գծով: Այստեղ նրա ելույթով առաջին անգամ նման բարձր ամբիոնից ներկայացվեցին Արցախում եւ Նայաստանում փիրող իրավիճակը, հայ ժողովրդի դեմ ծավալված բռնությունները:

1990-1995թ.թ. Ռաֆայել Պապայանը եղել է Նայաստանի Նանրապետության Գերագույն խորհրդի պարգամավոր, խորհրդարանի Մարդու իրավունքների մշտական հանձնաժողովի նախագահ, իսկ 1995-1997թթ.՝ Նայաստանի Նանրապետության Ազգային ժողովի պարգամավոր, գիտության, կրթության եւ մշակույթի մշտական հանձնաժողովի նախագահ:

1997 թվականին ՆՆ Ազգային ժողովի կողմից Ռ. Պապայանը նշանակվում է ՆՆ սահմանադրական դատարանի անդամ, որտեղ աշխատում է մինչեւ իր կյանքի վերջը:

1991 թվականից նա Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն Նոգետոր խորհրդի անդամ էր:

Ռ. Պապայանը հեղինակ է քնարական մի շարք ժողովածուների, գրականագիտական, իրավագիտական, հրապարակախոսական ավելի քան 150 հոդվածների, թարգմանական գրքերի՝ հրապարակված Երեւանում, Մոսկվայում, Ս.Պետերբուրգում, Դորպատում, Փարիզում: Դրանց թվում են «Ազգային ոտանավորի համեմատական փիլաթանություն» (Եր., 1980), «Տեռորի դիմակները (Եր., 1992): Նեղինակ է նաեւ «Տագնապներ» (Եր., 1991), «Անահիտ» մանկական բանաստեղծությունների (Եր., 2002), հայ բանաստեղծների թարգմանական ժողովածուների (Միսաք Մեծարենց. «Զնարերգություն»,

Եր., 1997), «XX դարի հայ պոեզիայի ընթացիկ» (Մոսկվա, 2008), «Պարույր Սևակ. «Անլռելի զանգակապուն» (Եր., 2009):

Ռ. Պապայանի գրչին են պատկանում իրավունքի բնագավառի այնպիսի եզակի հուշարձաններ, ինչպիսիք են «Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները» (հայերեն՝ Մ.Ա.Ս. Էջմիածին, 2002, ռուսերեն՝ Մոսկվա, 2002), «Աստվածաշունչը եւ մարդու հիմնական իրավունքները» (Եր., 2000), «Դատարանը՝ աստվածաշնչյան իմաստավորմամբ» (Եր., 2001): Այս թեմաներով նա զեկույցներով հանդես է եկել մի շարք միջազգային գիտաժողովներում՝ արժանանալով դրական մեծ արձագանքի:

Ռ. Պապայանը պարգևատրվել է Ռուս Ուղղափառ Եկեղեցու՝ «За труды во славу Святой Церкви» շքանշանով (1995) եւ Նայասարանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշանով: Նա երկար փարիներ գործուն մասնակցություն է ունեցել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի աշխատանքներին:

Ռաֆայել Պապայանը շիրակ, գուլպ, սկզբունքային եւ ուղղամիտ անձնավորություն էր, Նայրենիքի զգացողությամբ ներշնչված, միշտ սիրված ու մտերիմ ընկեր:

ՆՆ ՍԱՆՍԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՆՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՆՆ սահմանադրական դատարանը, նրա աշխատակազմը խոր վշտով հայտնում են ՆՆ սահմանադրական դատարանի անդամ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի անդամ **Ռաֆայել Արամաշուրի Պապայանի** մահը, ցավակցում նրա ընտանիքի անդամներին ու հարազատներին: